

ԿՈՄՈՒՆԻՉՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԵԾ ԾՐԱԳԻՐԸ

Սովետական ժողովուրդը, ամբողջ աշխարհի պրոգրեսիվ մարդկությունը մեծ խաղաղավարությամբ ընդունեց Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ծրագրի նախագիծը, որը պետք է հաստատվի պարտիայի առաջիկա՝ XXII համագումարում:

Գծվար է գերազանահատել մեր ժամանակների կարևորագույն ֆաղափական և տեսական այդ փաստարկուղքը, որը նոր էպոխա է բացում ոչ միայն մեր ժողովրդի և նրա պանծալի պարտիայի կյանքում, այլ նաև ողջ միջազգային բանվորական շարժման պատմության մեջ: Պարտիայի նոր ծրագրի նախագծում տրվում է պատմական զարգացման ժամանակակից էտապի խորը մարքսիստական վերլուծությունը, առաջ են փառվում և հիմնավորվում ՍՍՌՄ-ում Կոմունիստական հասարակության կառուցման մեծագույն խնդիրները:

«Կոմունիստական հասարակարգի կառուցումը,—ասվում է պարտիայի ծրագրի նախագծում,—դարձել է սովետական ժողովրդի անմիջական գործնական խնդիրը: Սոցիալիզմի աստիճանական վերաճումը կոմունիզմի—օրյեկտիվ օրինաչափություն է. այդ վերաճումը նախապատրաստված է սովետական սոցիալիստական հասարակարգի ամբողջ նախընթաց զարգացումով»:

Եվ, իսկապես, ֆաղափական պայմարի ասպարեզ էլնելով 19-րդ և 20-րդ դարերի սահմանագծում, Լենինյան պարտիան նպատակադրեց իրականություն դարձնել մարքսիզմի վեհ գաղափարները՝ տապալել շահագործող դասակարգերի տիրապետությունը և իրականացնել սոցիալիստական ուղուցիան: Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ուղուցիայի հաղթանակը իրենով նշանավորեց մեր պարտիայի առաջին ծրագրի իրականացումը:

Ստեղծելով բանվորների և գյուղացիների աշխարհում առաջին պետությունը, մեր երկրի աշխատավորությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, պատմական կարևոր ժամանակամիջոցում իրականացրեց մեր երկրում սոցիալիզմի կառուցման լենինյան պլանը. դրանով իսկ կատարվեց մեր պարտիայի երկրորդ ծրագիրը:

Այժմ Սովետական Միության Կոմունիստական պարտիան, հենվելով սոցիալիզմի մեծագույն նվաճումների վրա, ընդունում է իր երրորդ՝ կոմունիզմի կառուցման ծրագիրը: Նոր ծրագիրը ստեղծագործաբար ընդհանրացնում է սոցիալիզմի կառուցման պրակտիկան, հաշվի է առնում ամբողջ աշխարհի ուղուցիան շարժման փորձը և, արտահայտելով պարտիայի կոլեկտիվ միտքը, սահմանում է կոմունիստական շինարարության գլխավոր խնդիրները և հիմնական էտապները»:

Նոր ծրագրի նախագծի առաջին մասում, պատմական ժամանակակից էտապի բոլոր կոմպոնենտների գիտական խորը վերլուծության շնորհիվ հիմնավորվում է կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու պատմական անհրաժեշտությունը: Ամենահզոր սոցիալիստական երկրի՝ ՍՍՌՄ-ի առկայությունը, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի անընդհաա ամրապնդումը և

րեղյայնումը, կապիտալիզմի համաշխարհային սիստեմի խորացող նգնաժամը, բանվոր դասակարգի միջազգային ուղղություն շարժման և ազգային-ազատագրական շարժումների զարգացումը—սրանք են այն հիմնական գործոնները, որոնց ազդեցության տակ մարդկության զարգացումը կապիտալիզմից րեքանում է դեպի կոմունիզմ:

Մրագրի նախագծի երկրորդ մասում ձևակերպվում են Սովետական Միության կոմունիստական պարտիայի խնդիրները՝ կոմունիստական հասարակության կառուցման մեջ: Առաջ հաշվով կոմունիստական հասարակության կառուցման ծրագիրը, պարտիան խնդիր է դնում առաջիկա տասը տարում (1961—1971) մեկ շնչին ընկնող արտադրանքի արտադրությամբ անցնել կապիտալիստական առավել զարգացած երկրից՝ ԱՄՆ-ից. այդ էություն ժամանակ «նշանակալի չափով կրաճառանա աշխատավորների նյութական բարեկեցությունը և կուլտուր-տեխնիկական մակարդակը, բոլորի համար կապահովվի լիություն. բոլոր կոլաբորատիվություններն ու սովխոզները կդառնան բարձր արտադրողական և բարձր եկամտաբեր տնտեսություններ. հիմնականում կբավարարվեն սովետական մարդկանց բարեկարգ բնակարանների նկատմամբ պահանջները, կանհետանա ծանր ֆիզիկական աշխատանքը, ՍՍՌ-ը կդառնա ամենակարև աշխատանքային օրվա երկիր»:

Մրագրի նախագիծը նախատեսում է, որ երկրորդ տասնամյակում (1971—1981) կստեղծվի կոմունիզմի նյութա-տեխնիկական բազան, որի հետևանքով ողջ բնակչության համար կապահովվի նյութական և կուլտուրական բարիքների ստատություն. սովետական հասարակությունը ընդհուպ կմոտենա ըստ պահանջների բաշխման սկզբունքի իրականացմանը, տեղի կունենա անցում գեպի միասնական համաժողովրդական սեփականությունը: *Այսպիսով, ՍՍՌ-ում հիմնականում կկառուցվի կոմունիստական հասարակություն:*

Կոմունիստական շինարարության բոլոր կողմերը ներհանույես կապված են իրար հետ, գտնվում են փոխներգործության մեջ և փոխադարձաբար պայմանավորում են իրար, սակայն հիմնականը, կոմունիստական շինարարության որոշող գործոնը, էկստրակայի զարգացումն է: Դրա համար էլ պատահական չէ, որ պարտիայի ծրագրի նախագծում հանգամանորեն տրվում են մեր երկրի արտադրողական ուժերի զարգացման հեռանկարները, կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման հարցերը: Մրագրի նախագծի համաձայն արդյունաբերական արտադրանքի ծավալը 1980 թվականին կանի ավելի քան վեց անգամ, իսկ գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր ծավալը՝ երեք ու կես անգամ: Դրա հետ միաժամանակ կիրականացվի երկրի լրիվ էլեկտրիֆիկացումը, արտադրության կոմպլեքսային մեկնայացումն ու ավտոմատացումը: Այդ ամենի հետևանքով՝ «ՍՍՌ-ը կունենա իրենց հզորությամբ շտապանրված արտադրողական ուժեր, կգերազանցի սովելի զարգացած երկրների տեխնիկական մակարդակը և բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի արտադրությամբ առաջին տեղը կգրավի աշխարհում:

Տնտեսական ինտենսիվ զարգացումը հասարակական նոր ֆորմացիայի գլխավոր գեներն է: Կապիտալիզմի և սոցիալիզմի պայթարը առաջին հերթին տեղի է ունենում հենց տնտեսության բնագավառում: Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծումը, որը կապահովի ողջ ժողովրդի անընդհատ անող նյութական ու կուլտուրական մակարդակը, կնշանակի սոցիալիզմի վերջնական հաղթանակը կապիտալիզմի նկատմամբ:

Կոմունիզմ կառուցող սովետական ժողովրդին անհրաժեշտ է խաղաղություն, որի պայմաններում միայն հնարավոր կլինի իրականացնել մեր հոսանքային հետազոտության հետազոտությունը: Կոմունիստական պարտիան իր արտաքին քաղաքական գործունեության գլխավոր նպատակն է համարում՝ ապահովել ՄՍՖՍ-ում կոմունիստական հասարակարգի կառուցման խաղաղ պայմաններ և բոլոր խաղաղասեր ժողովուրդների հետ մեկտեղ փրկել մարդկությանը մի նոր համաշխարհային պատերազմից: Հավատարիմ լինելով խաղաղ գոյակցության շենինյան սկզբունքներին, պարտիան «ելնում է այն բանից, որ աշխարհում գոյացել է անում են ուժեր, որոնք բնորոշվում են պակասակշիռ և ամբողջական բնորոշում խաղաղությունը»: Պարտիան համոզված է, որ սոցիալիստական հզորացների, խաղաղասեր ոչ սոցիալիստական պետությունների միջազգային բանավոր դասակարգի և խաղաղության գործը պաշտպանող բոլոր ուժերի միացյալ ուժերով կարելի է կանխել համաշխարհային պատերազմը: «Պատերազմները մերացնելը, երկրագնդի վրա հավիտենական խաղաղություն հաստատելը, կոմունիզմի պատմական միտումն է»:

Նշելով մեր երկրում կոմունիստական հասարակության կառուցման ուղիները, ՄՄԿԳ ծրագրի նախագիծը առաջ է քաշում տեսական մի շարք նոր դրույթներ, որոնք հանդիսանում են մարքսիզմ-լենինիզմի թեորիայի հետագա զարգացումը պատմական ժամանակակից էտապում: Այդպիսի դրույթներից մեկը այն հետևությունն է, թե պետության և պետության հիմնականում, որը մեր երկրում հաստատվեց որպես հետևանք սոցիալիստական ռեվոլյուցիայի, ապահովելով շահագործող դասակարգի վերացումը, սոցիալիզմի լիակատար և վերջնական ռադիկալիզմ, անցումը կոմունիստական շինարարության, երկրի ներքին պայմանների զարգացման տեսակետից, ՄՍՖՍ-ում դադարել է անհրաժեշտություն լինելուց: Այժմ մեզ պետությունը վեր է ածվում համաժողովրդական պետության, որը կպահպանվի նաև կոմունիզմի կառուցման ողջ շրջանում: Այս դրույթը հանդիսանում է պետության մասին մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի հետագա զարգացումը:

Կոմունիզմի հոյակապ շենինի կառուցումը Սովետական Միության բոլոր ժողովուրդների բնորոշումը գործն է: Սոցիալիզմի մեծագույն նվաճումներից մեկը ազգային հարցի լուծումն է՝ ժողովուրդների իսկական հավասարության և եղբայրության հիմքի վրա: ՄՍՖՍ-ի ազգությունների հետագա զարգացումը, նրանց տնտեսական, գաղափարական մեծացումը և եղբայրական միասնությունը ՄՄԿԳ-ի ծրագրի նախագծի կարևորագույն դրվածքներից է: Սովետական մարդկանց դաստիարակությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի և սոցիալիստական հայրենասիրության ոգով, պարտիայի գաղափարական աշխատանքի կարևոր խնդիրն է, բնորոշվում է ՄՄԿԳ-ի ծրագրի նախագծում:

Պարտիան խնդիր է դնում «այսուհետև ևս հետևողականորեն կիրառել ինտերնացիոնալիզմի սկզբունքները ազգային հարաբերությունների ասպարեզում, ամրապնդել ժողովուրդների բարեկամությունը՝ որպես սոցիալիզմի կարևորագույն նվաճումներից մեկը, անհաշտ պայքար մղել ամեն տեսակ նացիոնալիզմի ու շովինիզմի դրսևորումների և մնացուկների դեմ, ազգային սահմանափակության և բացառիկության, անցյալի իդեալականացման և ժողովուրդների պատմության մեջ սոցիալական հակասությունների սքողման ակնգեղեցիկների դեմ, իրենց դարձնել սովորույթների և բարքերի դեմ»:

Ծրագրի կարևոր բաժիններից մեկը նվիրված է պարտիայի խնդիրներին՝ գաղափարախոսության, դաստիարակության, կրթության, գիտության և կուլտուրայի բնագավառում: Կոմունիզմի ծավալուն շինարարության շրջանում գաղափարական աշխատանքը բնորոշվում է հարցերի մի հսկայական շրջան: Քարձր գիտակցականության, աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի դաստիարակությունը, անցյալի վերապրուկների լիակատար հաղթահարումը, անհատի բազմակողմանի ներդաշնակ զարգացումը, հարուստ հոգևոր կուլտուրայի ստեղծումը—այսպիսիք են կոմունիզմին անցնելու շրջանի գաղափարական աշխատանքի գլխավոր խնդիրները:

Մեծ է սովետական գրականության ու արվեստի դերը կոմունիզմ կառուցող սովետական մարդկանց դաստիարակելու գործում:

«Գրականության և արվեստի զարգացման մեջ գլխավոր գիծը,—բնղգրծված է ծրագրի նախագծում,—ժողովրդի կյանքի հետ ունեցած կապերի ամրապնդումն է. սոցիալիստական իրականության հարստության և բազմազանության նշմարտացի և բարձր-գեղարվեստական արտացոլումը, նորի, հիրավի կոմունիստականի ոգեշունչ և պայծառ վերարտադրությունը և այն ամենի մեկացումը, ինչ դիմադրում է հասարակության առաջընթաց շարժմանը»:

Ծրագրի նախագծում նշվում է, որ «Սովետական գիտնականների պատվի գործն է ամրապնդել սովետական գիտության նվաճած առաջավոր դիրքերը գիտության ամենակարևոր նյութերում և բոլոր նիմնական ուղիներով առաջատար դիրք գրավել համաշխարհային գիտության մեջ»:

Նշանակալից խնդիրներ են դրվում նաև հասարակական գիտություններն առաջ, որոնք կազմում են հասարակության զարգացման ղեկավարման գիտական հիմքը: «Այս բնագավառում գլխավոր են հանդիսանում կոմունիստական շինարարության պրակտիկայի ուսումնասիրությունը և տեսական բնդհանրացումը: Սոցիալիզմի տնտեսական, բաղախական և կուլտուրական զարգացման և նրա՝ կոմունիզմի վերանելու հիմնական օրինաչափությունների նետագոտությունը, կոմունիստական դաստիարակության պրոբլեմների մշակումը»:

ՍՄԿՊ-ի նոր ծրագրի կատարումը, Սովետական Միությունում Կոմունիստական հասարակության կառուցումը կհանդիսանա մարդկության մեծագույն նվաճումը և կունենա հսկայական ռեոլյուցիոն նշանակություն:

Առաջ բաշելով Կոմունիստական շինարարության ծրագիրը, «պարտիան ելնում է հետևյալ մարքս-լենինյան դրույթից. ժողովուրդը պատմության կերտողն է, կոմունիզմի կառուցումը ժողովրդի ձեռքի, նրա եռանդի, նրա բանակաչության գործն է: Կոմունիզմի հաղթանակը կախված է մարդկանցից, և կոմունիզմը մարդկանց համար է կառուցվում»: Իրա համար էլ պարտիան հանդիսավոր կերպով հռչակում է՝ Սովետական մարդկանց ներկայիս սերունդը կապրի կոմունիզմի օրոք: